


ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՅՑ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԲԻՆԳԻ ՄԱՍԻՆ 2018Թ.

ՀԱՅԱՍՏԱՆ (ԽՈՒՄԲ II)

28 հունիսի, 2018թ.

Հայաստանի կառավարությունն ամբողջությամբ չի բավարարում թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին, սակայն նշանակալի աշխատանքներ է իրականացնում այդ ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում կառավարությունը նշանակալի ջանքեր է գործադրել նվազագույն չափանիշների ապահովման ուղղությամբ՝ իրականացնելով իրավապահների ինտենսիվ ուսուցումներ, փոքր-ինչ ավելացնելով քրեական հետապնդումների թիվը և կազմակերպելով իրազեկման տարբեր արշավներ: Այնուհանդերձ, նախորդ հաշվետու ժամանակահատվածի համեմատ այս ջանքերը չեն որակվել որպես լուրջ և կայուն ջանքեր: Կառավարությունը գոհերի բացահայտման կամ քննությունների անցկացման հարցում հանդես չի բերել նախաձեռնողականություն, այլ ապավինել է այն բանին, որ գոհերն իրենք ներկայանան. բացահայտված գոհերի թիվը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ նվազել է: Տեղական ոստիկանների կողմից թրաֆիքինգի հատկանիշներով հարուցված գործերի գերակշիռ մասը պատկան մարմինների կողմից կարճվել է՝ ապացույցների բացակայության հիմքով, իսկ արձագանքման առաջին օղակում չեն կիրառվել խոցելի խմբերի դիտազննման/սքրինինգի միասնական ցուցիչները: Քննիչները պարբերաբար հարցաքննել են գոհերին, այդ թվում՝ երեխաներին, և գոհերը մշտապես հայտնվել են դատարանում իրենց թրաֆիքինգի ենթարկած անձանց հետ միասին, ինչը վերստին տրավմա ապրելու վտանգ է պարունակել: Միջազգային կազմակերպությունների կողմից հաղորդումներ են եղել երեխաների խնամքի պետական հաստատություններում մանկական աշխատանքի ու երեխաների հանդեպ բռնությունների մասին, ինչպես նաև այն մասին, որ այդ հաստատություններում չկան երեխաների շահագործումը կանխարգելող միջոցներ: Կառավարության կողմից շարունակվել են կասեցված մնալ աշխատանքային տեսչության գործառույթների մեծ մասը՝ խոչընդոտելով կանոնավոր տեսչական ստուգումների անցկացմանը, որոնք կարող էին հարկադիր աշխատանքի դրսևորումների բացահայտման հնարավոր գործիք հանդիսանալ. հաշվետու ժամանակահատվածում չեն անցկացվել տեսչական ստուգումներ աշխատանքի հարցերով: Ուստի, Հայաստանը գնահատման սանդղակում նահանջել է՝ տեղ գտնելով 2-րդ խմբի երկրների շարքում:



ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

132 և 132-2 հոդվածների համաձայն իրականացնել խիստ քննություններ, քրեական հետապնդում թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ և դատապարտել նրանց. մշակել և իրականացնել միջոցառումներ երեխաների խնամքի պետական հաստատություններում մանկական աշխատանքի և երեխաների հնարավոր թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ. ավելացնել թրաֆիքինգի գոհերի բացահայտման նախաձեռնողական ջանքերը. մշակել ստանդարտ ընթացակարգեր թրաֆիքինգի գոհերի դիտազննումների/սքրինինգի վերաբերյալ և իրականացնել համապատասխան աշխատակիցների ուսուցում՝ վերհանելու թրաֆիքինգը մարմնավաճառների, միգրանտների, փախստականների և ռիսկային այլ խմբերի շրջանում. նախաձեռնողական քննություններ սկսել թրաֆիքինգի հնարավոր դեպքերով նույնիսկ այն դեպքերում, երբ տուժողի բողոքում թրաֆիքինգի մասին հիշատակում չկա. թրաֆիքինգի գործերում զոհակենտրոն մոտեցման դրսևորման հարցերի շուրջ ուսուցումներ ապահովել քննիչների, դատախազների և դատավորների համար, այդ թվում անչափահաս գոհերի մասով և ապահովել խորացված ուսուցումներ թրաֆիքինգի գործերով քննությունների ու քրեական հետապնդումների վերաբերյալ. թույլատրել աշխատանքային տեսուչներին կանոնավոր տեսչական ստուգումներ անցկացնել ու բացահայտել գոհերին չհայտարարված ստուգայցերի միջոցով. սահմանել արտերկրում գտնվող գոհերին Հայաստան հայրենադարձելու պաշտոնական ընթացակարգ, այդ թվում՝ ձեռնարկել միջոցներ կազմակերպական ծախսերը հոգալու համար. լիցենզավորել, կանոնակարգել ու ուսուցում ապահովել տեղական զբաղվածության ծառայությունների և գործակալների համար, որպեսզի նրանք կարողանան օգնել կանխել Հայաստանի քաղաքացիների հարկադիր աշխատանքն արտերկրում. աշխատել Ռուսաստանի իշխանությունների հետ հարկադիր աշխատանքի ՀՀ քաղաքացի գոհերին բացահայտելու և աշխատանքային թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հարցում. աշխատել հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) հետ գտնելու ուղիներ Թուրքիայում հայ գոհերին

հայտնաբերելու և աջակցելու համար. և ընդունել օրենսդրություն տուժողների և/կամ վկաների պաշտպանության միջոցներ ձևավորելու համար:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊԼՆԴՈՒՄ

Իրավապահ տիրույթում Կառավարության ջանքերը պասիվացել են: Քրեական օրենսգրքի 132 և 132-2 հոդվածներով քրեականացվում է թե՛ սեռական, թե՛ աշխատանքային թրաֆիքինգը և այդ հոդվածներով նախատեսվում է 5-ից 8 տարվա ազատազրկում, ինչը բավարար խիստ և համարժեք պատիժ է այնպիսի ծանր հանցանքների համար, ինչպիսին է բռնաբարությունը: Պատկան մարմինները հետաքննել են թրաֆիքինգի 6 գործ (2016թ. քննվել էր 16 գործ), ընդ որում գործերից 2-ն առնչվում են սեռական թրաֆիքինգին, իսկ 4-ը՝ աշխատանքային թրաֆիքինգին (2016թ. քննվել էր սեռական թրաֆիքինգի 5 գործ, աշխատանքային թրաֆիքինգի 10 գործ և սեռական ու աշխատանքային թրաֆիքինգի հատկանիշներով զուգորդված 1 գործ): Պատկան մարմինների կողմից մեղադրանք է առաջադրվել 3 հոգու, որից 1-ը սեռական թրաֆիքինգի, մյուսը՝ մուրացկանության դրդելու և երրորդը՝ հարկադիր աշխատանքի համար (2016թ.-ին մեղադրանք է առաջադրվել 1 հոգու): Դատարանների կողմից դատապարտվել է 1 հոգի՝ սեռական թրաֆիքինգ իրականացնելու համար (2016թ.-ին սեռական թրաֆիքինգ իրականացնելու համար դատապարտվել էին 3-ը): Թրաֆիքինգ իրականացրած անձին նշանակվել էր պատիժ 12 տարվա ազատազրկման տեսքով:

Դիտորդները փաստում էին, որ Քննչական կոմիտեն և Գլխավոր դատախազությունը տեղի ուստիկանների կողմից թրաֆիքինգի հատկանիշներով հարուցված գործերի մեծ մասը կարճում էին՝ ապացույցների բացակայության հիմքով: Տեղի քննիչները չէին տիրապետում զոհերին, հատկապես՝ անչափահասներին հարցաքննելու անհրաժեշտ հմտություններին. այնուհանդերձ, Քննչական կոմիտեն իր 5 մարզային կենտրոններում ձևավորել է հարցաքննության մանկական սենյակներ: Իրավապահները քննել են միայն քրեական հանցագործության մասին տուժողների պաշտոնական բողոքները, որոնցում նրանք որոշակիորեն թրաֆիքինգի մեղադրանք էին առաջ քաշում, և չեն ձեռնարկել նախաձեռնողական քննություններ այնպիսի հանցավոր գործողությունների մասով, որոնք ենթադրյալ թրաֆիքինգի տարրեր կարող էին մատնանշել: Արդյունքում, իրավապահները քննություններ են նախաձեռնել միայն այն դեպքում, երբ զոհը ինքնաբացահայտվել է: Կառավարությունը թրաֆիքինգի հարցերով ուսուցումներ է ապահովել 320 դատախազների, Քննչական կոմիտեի 327 քննիչների և քրեակատարողական հաստատությունների 540 աշխատակիցների համար: Կառավարության կողմից ուսուցում է ապահովվել անչափահասների գործերով զբաղվող 119 պաշտոնյաների համար, իսկ Քննչական կոմիտեի 21 քննիչներ ուսուցում են անցել երեխաների թրաֆիքինգին առնչվող հարցերի շուրջ: Կառավարության կողմից նաև ուսուցում է ապահովվել պաշտոնեական հանցակցության դեմ պայքարի հարցերի շուրջ, որին մասնակցել են 174 քաղաքացիական ծառայողներ: Կառավարության կողմից թրաֆիքինգին առնչվող հանցանքներում պետական

պաշտոնյաների հանցակցության մասին քննությունների, հետապնդումների ու դատապարտումների մասին հաղորդումներ չեն եղել: Ռուսաստանի հետ կապված հարկադիր աշխատանքի գործերի քննությունը շարունակում էր խնդրահարույց լինել, քանի որ հայ քննիչները շարունակում էին իրավապահների հետ համագործակցության հարցում դժվարությունների բխվել: Նույն կերպ, Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը շարունակում էր խոչընդոտել իրավապահ ու զոհերին աջակցելու աշխատանքներին Թուրքիային առնչվող գործերի մասով:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի բացահայտված զոհերի պաշտպանությանն ուղղված կառավարության ջանքերը նվազել են: Բացահայտվել է 13 զոհ (2016թ.՝ 22 զոհ): Չոհերից 8-ը ենթարկվել են սեռական թրաֆիքինգի, իսկ 5-ը՝ հարկադիր աշխատանքի (2016թ.՝ 3 սեռական թրաֆիքինգի և 19 հարկադիր աշխատանքի զոհ). զոհերից 10-ը կին էին, 3-ը տղամարդ (2016թ.՝ 5 կին և 17 տղամարդ) և 2 անչափահաս (և՛ 2016թ., և՛ 2017թ.): Փորձագետները մատնանշում էին, որ չկար նախաձեռնողական մոտեցում բացահայտման հարցերում և կառավարությունը հիմնվում էր այն բանի վրա, որ զոհերը ինքնաբացահայտվելու են: Առաջին օդակի աշխատողները չէին օգտագործում խոցելի խմբերի բնակչության դիտագնման/սքրինինգի միասնական ցուցիչները: «Նախնական նույնացման փուլում», որը հնարավոր զոհի մասին տվյալների հավաքման փուլն է և առավելագույնը կարող է տևել 10-ն օր, հնարավոր զոհերի համար կառավարությունն ապահովում էր ժամանակավոր կացարան, անհետաձգելի բուժօգնություն և հոգեբանական աջակցություն: Չոհերի նույնացման հանձնաժողովը, որի կազմում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ են, պաշտոնապես մարդկանց թրաֆիքինգի զոհ է ճանաչել հիմնվելով այն տեղեկությունների վրա, որոնք ձեռք են բերվել «նախնական նույնացման փուլում»: ՀԿ-ների հաղորդմամբ համագործակցությունը կառավարության հետ եղել է դրական և ուղղորդման մեխանիզմները լավ են գործել:

Կառավարությունը զոհերի պաշտպանության համար հատկացրել է 19.068.600 ՀՀ դրամ կամ 39.320 ԱՄՆ դոլար, որը ներառում է ՀԿ-ի կողմից գործարկվող ապաստարանի գործառնական ծախսերը (2016թ. հատկացվել է 18.846.000 դրամ կամ 38.860 ԱՄՆ դոլար): Կառավարությունը և տեղական հասարակական կազմակերպությունները համատեղ զոհերին ապահովել են իրավական, հոգեբանական աջակցություն և բուժօգնություն, ապաստարան, միանվագ դրամական փոխհատուցում 250.000 ՀՀ դրամի կամ 515 ԱՄՆ դոլարի չափով և ներգրավել են նրանց տարբեր սոցիալական, կրթական և զբաղվածության ծրագրերում: Կառավարությունը նաև առաջարկել է անվճար բուժօգնություն. սակայն իրավական խորհրդատվության հարցում, այդ թվում փաստաբանների ծախսերը հոգալու մասով, հիմնվել է ՀԿ-ների աշխատանքի վրա: Բուժօգնություն ապահովվել է 2 զոհի համար (2016թ.՝ 1), իսկ 9 հոգի ստացել են իրավական խորհրդատվություն: Կառավարությունը զոհերին աջակցելու նպատակով պահպանել է համագործակցության համաձայնագիրը և մասնակի ֆինանսավորել է ՀԿ-ի կողմից գործարկվող մեկ մասնագիտացված ապաստարանի. ՀԿ-ի կողմից գործարկվող

ապաստարանում աջակցություն են ստացել տարվա ընթացքում նույնացված 19 նոր զոհեր (2016թ.՝ 19 զոհ), իսկ ընդհանուր թիվը կազմել է 36 հոգի: ՀԿ-ի կողմից գործարկվող ապաստարանում տեղավորված չափահաս զոհերից պահանջվել է առանց ուղեկցության դուրս գալու դեպքում ապաստարանի անձնակազմին տեղյակ պահել այդ մասին, սակայն նրանք ազատ էին իրենց հայեցողությամբ հեռանալ ապաստարանից, եթե աջակցության կարիք այլևս չէին զգում: Ծառայություններն հավասարապես հասանելի են եղել թե՛ կին, թե՛ տղամարդ զոհերի համար, սակայն տղամարդիկանց համարապաստարան չկար: Անչափահաս զոհերը տեղավորվում էին ՀԿ-ի կողմից գործարկվող ապաստարանում կամ երեխաների խնամքի հաստատություններում: Այնուհանդերձ, Եվրոպայի խորհրդի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագիտական խմբի (GRETA) և ԵԱՀԿ-ի զեկույցներում մատնացույց էին արվում մանկական աշխատանքի ու երեխաների նկատմամբ բռնությունների դրսևորումներ երեխաների խնամքի պետական հաստատություններում. մանկական աշխատանքը երեխաների խնամքի պետական հաստատություններում համարվում է նորմալ երևույթ: Օրենքի համաձայն ՀՀ արտաքին գործերի նախարարությունը լիազորված է համակարգել արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացի զոհերի հայրենադարձումը, սակայն դիտորդները փաստում էին, որ հայրենադարձման հետ կապված կային դժվարություններ, քանի որ չկային սահմանված ընթացակարգեր և ֆինանսական միջոցներ՝ կազմակերպական ծախսերը հոգալու համար. կառավարության կողմից ապահովվել է 3 զոհի հայրենադարձումը (2016թ. 11 զոհ է հայրենադարձվել):

Իրավասու մարմինները զոհերի աջակցության ցուցաբերումը չեն պայմանավորել իրավապահների հետ համագործակցությամբ և օտարերկրացի զոհերին ապահովել են նույն իրավունքներն ու ծառայությունները, ինչ ՀՀ քաղաքացիներին: Կառավարությունը չի պատժել թրաֆիքինգի զոհերին այն անօրինական արարքների համար, որոնք եղել են թրաֆիքինգի ենթարկվելու ուղղակի հետևանք: Դիտորդները փաստում էին, որ հեռավոր բնակավայրերում իրավապահ աշխատակիցները չէին տիրապետում ինֆորմացիային ու չէին անցել ուսուցում, որպեսզի զոհերին իրազեկեին պաշտպանություն ու աջակցություն ստանալու նրանց իրավունքի մասին: Ձոհերը վարանում էին աջակցել քրեական հետապնդումներին, քանզի ցուցմունք տվող անձի գաղտնիությունը չէր ապահովվում, ինչը թրաֆիքինգ իրականացնողների կողմից հաշվեհարդարի վտանգ էր ստեղծում, ու նաև արատավորում էր նրանց բարի համբավը ընտանիքի ու շրջապատի աչքերում: Իրավասու մարմինները չեն պաշտպանել զոհերի, այդ թվում անչափահասների իրավունքները վարույթների ընթացքում. քննիչները պարբերաբար հարցաքններ են զոհերին, դատարանում զոհերը միշտ կանգնել են թրաֆիքինգ իրականացնողների առաջ, ինչը կարող ստիպել վերստին վերապրել ողջ տրավման: Կառավարությունը շարունակում էր չունենալ զոհերի ու վկաների պաշտպանության պաշտոնական ծրագիր: 2016թ. ընդունված կառավարության որոշմամբ ապահովվեց պաշտպանություն վկաների, մասնավորապես՝ թրաֆիքինգի զոհերի համար: Օրենքը զոհերին իրավունք է վերապահում հատուցում պահանջել քրեական գործի շրջանակում կամ առանձին քաղաքացիական հայցի միջոցով: Ձոհերը որևէ քաղաքացիական հայց չեն ներկայացրել. այնուհանդերձ, նախորդ տարիներին դատավորները քաղաքացիական հայցերով փոխհատուցման վճիռներ չեն կայացրել՝ նշելով, որ զոհերը չեն կարողացել

հիմնավորել ֆինանսական կորուստներ կրած լինելու հանգամանքը: Օրենքը քննիչներին թույլ էր տալիս արգելանքի տակ վերցնել մեղադրյալի գույքը՝ քաղաքացիական հայցերով վճարումն ապահովելու համար, սակայն գործնականում սա շատ հազվադեպ է կիրառվել:

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կառավարությունը պահպանել է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված ջանքերը: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով նախարարական խորհուրդը և միջգերատեսչական աշխատանքային խումբը շարունակել են 2016-18թթ. գործողությունների ազգային ծրագրի իրականացումը և հրապարակել են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ կատարված աշխատանքների վերաբերյալ: Դիտորդները փաստում էին, որ կառավարությունը չի իրականացրել գործողությունների ազգային ծրագրի առաջընթացի մոնիթորինգ և չի գնահատել այդ աշխատանքների ազդեցությունն ու արդյունքները: Չի եղել աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեությունը վերահսկելու և կանոնակարգելու մեխանիզմ: Իրավական փոփոխությունների արդյունքում աշխատանքային տեսչության գործառույթների գերակշիռ մասը 2015թ. հուլիսից կասեցվել է, տեսուչները չեն կարող պարբերական ստուգումներ անցկացնել և վերհանել հարկադիր աշխատանքը մատնանշող ցուցիչները: Առողջապահության նախարարությունը ձևավորել է Առողջապահական տեսչական մարմինը, սակայն այդ մարմնի գործառույթները սահմանափակվում են աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության ապահովման խնդիրներին ուղղված տեսչական ստուգումներով, և այն իրավասություն չունի կատարել չհայտարարված կամ անսպասելի ստուգումներ: Առողջապահական տեսչական մարմինը դեռևս համալրում է տեսուչների կազմը և հաշվետու ժամանակահատվածում որևէ տեսչական ստուգում չի կատարել: Կառավարությունը կազմակերպել է իրազեկման մեծածախ ուղղված քննարկումներ դպրոցներում և իրականացրել է իրազեկման արշավներ, որոնց թիրախում եղել են աշակերտներն ու ուսուցիչները: Միյուրքի նախարարությունը սահմանը հատող, ինչպես նաև Միջին Արևելքում ու Եվրոպայում բնակվող հայերին բաժանել է տեղեկատվական թերթիկներ թրաֆիքինգի վտանգների վերաբերյալ: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հեռուստատեսությամբ հեռարձակել է թրաֆիքինգի հարցերին վերաբերող հաղորդում, իսկ պետական կառույցները թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկություններ են զետեղել իրենց կայքերում, այդ թվում տեղեկություններ ուստիկանության և ՀԿ-ների կողմից գործարկվող թեժ գծերի վերաբերյալ. թեժ գծին ստացված զանգերի քանակի մասին կառավարությունը հաշվետվություն չի ներկայացրել: Կառավարությունը ջանքեր չի գործադրել կոմերցիոն սեռական ակտերի կամ հարկադիր աշխատանքի նկատմամբ պահանջարկը նվազեցնելու ուղղությամբ:

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՐԿՐՈՒՄ

Հայաստանը սկզբնաղբյուր և, ավելի փոքր ծավալով, վերջնակետ երկիր է աշխատանքային և սեռական թրաֆիքինգի ենթարկվող տղամարդկանց, կանանց և երեխաների համար: ՀՀ քաղաքացիներն աշխատանքային թրաֆիքինգի են ենթարկվում Ռուսաստանում, Միացյալ Արաբական Էմիրություններում (ՄԱԷ) և Թուրքիայում: ՀՀ քաղաքացի կանայք և երեխաներ սեռական թրաֆիքինգի են ենթարկվում ՄԱԷ-ում և Թուրքիայում: ՀՀ քաղաքացի կանայք և երեխաները երկրի ներսում ենթարկվում են սեռական ու աշխատանքային թրաֆիքինգի, նրանց նաև դրդում են հարկադիր մուրացկանության: Որոշ երեխաներ երկրի ներսում աշխատում են գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների մատուցման ոլորտներում, որտեղ նրանք խոցելի են աշխատանքային թրաֆիքինգի մասով: Մարդկանց թրաֆիքինգի առումով խիստ խոցելի են մնում գյուղական բնակավայրերի կրթական ցածր մակարդակ ունեցող տղամարդիկ և սոցիալական խնամքի հաստատությունների երեխաները: